

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1962 - Լ որոշման

**ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԵՐՔՈ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026-2035 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2026-2035 թվականների Ազգային մակարդակով սահմանված հանձնառությունների իրականացման ծրագիրը (Ծրագիր) սահմանում է մեղմման և հարմարվողականության հստակ միջոցառումներ, որոնք ուղղված են ԱՍՀ 3.0 թիրախներն ապահովելուն: Համահունչ Հայաստանի միջազգային պարտավորություններին՝ ծրագիրը նաև ապահովում է, որ միջոցառումները մշակվեն և իրականացվեն գենդերային զգայուն մեթոդաբանությամբ՝ հաշվի առնելով կանանց և տղամարդկանց տարբերակված կարիքները, խոցելիության մակարդակը և կարողությունները:

2. Հաշվի առնելով Հայաստանի կլիմայական հանձնառությունները՝ Ծրագիրը ներկայացնում է ոլորտային միջոցառումներ, վերջիններիս իրականացման ժամկետները, ինստիտուցիոնալ պատասխանատվությունները, ծախսերի գնահատականները, ինչպես նաև իրականացնելու մեխանիզմներն ու ֆինանսավորման աղբյուրները: Այն ներառում է կարիքների գնահատում՝ ներառյալ կարողությունների զարգացման, տեխնոլոգիաների փոխանցման, չափումների, հաշվետվողականության, հավաստագրման, և ներառականության մեխանիզմների վերաբերյալ:

3. Ծրագիրը նպատակ ունի ուղղորդել պետական կառավարման համակարգի մարմիններին, մասնավոր հատվածին, միջազգային գործընկերներին և այլ շահագրգիռ կողմերին՝ գործողությունները համակարգելու, ռեսուրսների ներգրավմանն աջակցելու և ցածր արտանետումների ու կլիմայակայուն և սոցիալապես ներառական տնտեսական և սոցիալական զարգացման նպատակներին հասնելու համար:

2. ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4. Մեղմման և հարմարվողականության միջոցառումները համակարգված են ըստ ոլորտների և դասակարգված են ըստ դրանց իրականացման մեխանիզմների ու ֆինանսավորման պահանջների: Յուրաքանչյուր միջոցառում առանձնացված է ըստ կարգավիճակի՝ պայմանական կամ ոչ պայմանական:

5. Իրականացման պլանում ներառված 35 մեղմման միջոցառումներից 22-ը (63%) դասակարգված են որպես ոչ պայմանական, իսկ 13-ը (37%)՝ պայմանական: Մեղմման միջոցառումների բաշխումն ըստ ոլորտների ներկայացված է Նկար 1-ում:

Նկար 1. Մեղմման միջոցառումների բաշխվածությունը ըստ ոլորտների



6. Ծրագիրը ներառում է հարմարվողականության 41 միջոցառում, որոնք արտացոլված են ութ թիրախային ոլորտներում:

7. Գործողությունների ծավալը և բնույթն ավելի հստակ ներկայացնելու նպատակով բոլոր մեղմման և հարմարվողականության միջոցառումները դասակարգվել են երեք տիպի՝

- 1) **Ինստիտուցիոնալ** – ուղղված են ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ու ամրապնդմանը: Դրանք ներառում են քաղաքականությունների մշակման, կարգավորիչ բարեփոխումների, կառավարման և ինստիտուցիոնալ բարելավումների, իրազեկվածության բարձրացման, ինչպես նաև կարողությունների զարգացման ուղղված գործողություններ:
- 2) **Ներդրումային** – ուղղված են ենթակառուցվածքների զարգացմանը և ներառում են կապիտալ ներդրումներ, շինարարական աշխատանքներ կամ որոշակի տեխնոլոգիաների ներդրում: Այս միջոցառումներն առավել շոշափելի բնույթ ունեն և սովորաբար պահանջում են զգալի ֆինանսական ու տեխնիկական ռեսուրսներ:
- 3) **Խաչաձև միջամտություններ** – ուղղված են ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ՝ ենթակառուցվածքային մոտեցումների տարրերին: Դրանք սովորաբար ձևավորվում են համակարգային մակարդակում՝ համադրելով փափուկ և կոշտ բաղադրիչները՝ համալիր խնդիրներն ամբողջական ձևով լուծելու նպատակով:

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԸ


8. Ծրագրի իրականացման ընդհանուր արժեքը 2026–2035 թթ. համար գնահատվում է շուրջ **2 տրիլիոն ՀՀ դրամ**, ինչն արտացոլում է ինչպես մեղմման, այնպես էլ հարմարվողականության ոլորտներում նախատեսված գործողությունների ծավալը:

- 1) **Մեղմման միջոցառումներ – 1.5 տրիլիոն ՀՀ դրամ** (\approx 3.8 միլիարդ ԱՄՆ դոլար), որից **748 միլիարդ ՀՀ դրամ**՝ ոչ պայմանական միջոցառումների համար, իսկ **710 միլիարդ ՀՀ դրամ**՝ պայմանական միջոցառումների համար:
- 2) **Հարմարվողականության միջոցառումներ – 498 միլիարդ ՀՀ դրամ** (\approx 1.3 միլիարդ ԱՄՆ դոլար):

9. Մեղմման միջոցառումները կազմում են ընդհանուր ծախսերի մոտ 75 տոկոսը, իսկ հարմարվողականության միջոցառումները՝ 25 տոկոսը: Ընդ որում, հարմարվողականության բոլոր միջոցառումներն այս փուլում չեն գնահատվել՝ մանրամասն իրագործելիության ուսումնասիրությունների կամ ծախսերի գնահատման բացակայության պատճառով: Հետևաբար, Ծրագիրը լիարժեքորեն չի արտացոլում ԱՍՀ 3.0-ում ներկայացված հարմարվողականության միջոցառումների մասշտաբն ու կարևորությունը:

10. Էներգետիկ ոլորտի միջոցառումները ամենառեսուրսատարն են, որոնց հաջորդում են գյուղատնտեսության և ՀՕՀՕՓԱՏ ոլորտների միջոցառումները: Նման բաշխվածությունը շեշտադրում է ցածր ածխածնային զարգացմանն անցման գործընթացների, ինչպես նաև հողօգտագործման և անտառային կառավարման ուղղությամբ իրականացվող ներդրումների կարևորությունը (Նկար 2):

Նկար 2. Մեղմման միջոցառումների ծախսերի բաշխվածությունը ըստ ոլորտների և տեսակների (միլիարդ ՀՀ դրամ)



11. Հարմարվողականության շրջանակում ամենաբարձր արժեք ունեցող ոլորտներն են Ջրային ռեսուրսները, կայուն քաղաքային զարգացումը, առողջապահությունը, ինչպես նաև գյուղատնտեսությունը (Աղյուսակ 1): Նշված առաջնահերթությունները ընդգծում են կլիմայական կայունության ձևավորման խաչաձև և համակարգային բնույթը:

Աղյուսակ 1. Հարմարվողականության միջոցառումների ծախսերի բաշխվածությունը ըստ ոլորտների և տեսակների

| ՈԼՈՐՏ | Բյուջե, հազար դրամ |
|---|--------------------|
| Ջրային անվտանգություն և հեղեղների նկատմամբ դիմակայունություն | 179 929 800 |
| Քաղաքային և ենթակառուցվածքային դիմակայունություն | 143 696 400 |
| Առողջապահություն | 121 402 900 |
| Կլիմայական խելացի գյուղատնտեսություն և սննդի անվտանգություն | 45 034 500 |
| Հողերի, անտառների և կենսաբազմազանության պահպանության կառավարում | 4 254 700 |
| Զբոսաշրջություն | 2 882 000 |
| Կառավարում, ներդրումներ և աղետներին դիմակայություն | 484 200 |
| Միջոլորտային առաջնահերթություններ | 423 800 |
| Ընդհանուր | 498 108 300 |

4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

12. Ծախսային շրջանակը արտացոլում է բազմամակարդակ ֆինանսավորման ճարտարապետություն, որն ընդգրկում է ազգային, միջազգային, հանրային և մասնավոր աղբյուրներ: Միջոցառումների իրականացման ծախսերի գնահատականների հիման վրա պահանջվող ռեսուրսների ներգրավման համար առանցքային նշանակություն ունեն հետևյալ գործիքներն ու աղբյուրները.

1) **ՀՀ պետական բյուջե** – ապահովում է ֆինանսական ռեսուրսներ ենթակառուցվածքային ներդրումների համաֆինանսավորման համար, հատկապես արտանետումների մեղմման, հարմարվողականության և կլիմայական կայունության ամրապնդման ոլորտներում:

2) **Համայնքային բյուջեներ** (օրինակ՝ Երևանի քաղաքապետարան) – նպաստում են տեղական մակարդակում ենթակառուցվածքային նախագծերի ֆինանսավորմանը և համաֆինանսավորմանը, մասնավորապես կլիմայական մեղմման, հարմարվողականության և արտանետումների կրճատման ուղղություններով:

3) **Բազմակողմ կազմակերպություններ** – ներառում են ինչպես զարգացման բանկեր, այնպես էլ նպատակային կլիմայական հիմնադրամներ, որոնք ակտիվորեն աջակցում են Հայաստանի կլիմայական օրակարգի իրականացմանը: Հիմնադրամները տրամադրում են տեխնիկական աջակցություն, կարողությունների զարգացման

հնարավորություններ և դրամաշնորհային ֆինանսավորում՝ զարգացման ծրագրերի, քաղաքականությունների մշակման և ինստիտուցիոնալ ամրապնդման նպատակով:

4) **Երկկողմ կազմակերպություններ** – ֆինանսավորում են ինչպես ֆինանսական հաստատությունների, այնպես էլ տեխնիկական համագործակցության գործակալությունների միջոցով:

5) **Ածխածնի շուկայի մասնակցություն** – մասնավորապես Փարիզյան համաձայնագրի 6-րդ հոդվածի ներքո մեխանիզմներ, որոնք կիրառվում են միջազգային մեղմման ջանքերի համար ռեսուրսների ներգրավման և արտանետումների կրճատումների արդյունքների առևտրայնացման նպատակով՝ երկկողմ համաձայնագրերի և գլոբալ ածխածնային շուկաներին մասնակցության միջոցով:

6) **Մասնավոր հատվածի ներգրավվածություն** – առավել ընդգծված է մեղմման ոլորտում: Այն իրականացվում է կապիտալ ներդրումների, հանրային-մասնավոր գործընկերությունների, ինչպես նաև էներգետիկ ընկերությունների ուղղակի ներդրումների միջոցով:

7) **Համակցված ֆինանսավորման մոտեցումներ** – կիրառվում են մի շարք միջոցառումների դեպքում, հատկապես՝ զբոսաշրջության, քաղաքային հարմարվողականության և վերականգնվող էներգետիկայի ոլորտներում: Այս մոտեցման դեպքում պետական սուբսիդիաները, վենչուրային կապիտալը և միջազգային դրամաշնորհները համակցվում են՝ ներդրումային ռիսկերի նվազեցման և մասնավոր ներդրումների խթանման նպատակով:

8) **Նորարարական կանաչ ֆինանսական գործիքներ** – ներառում են կանաչ պարտատոմսերը, կլիմայական ապահովագրական մեխանիզմները, շրջանառու ֆոնդերը, ինչպես նաև արդյունքահեն ֆինանսավորումը: Նշված գործիքները կենսական նշանակություն ունեն մասնավոր ներդրումների ծավալների ընդլայնման և բարձր ազդեցությամբ միջոցառումների ֆինանսավորման մակարդակի բարձրացման համար, հատկապես քաղաքային հարմարվողականության և գյուղատնտեսության ոլորտներում:

9) **Պարտք-կլիմա փոխանակման մեխանիզմները**- մեխանիզմը հնարավորություն է ընձեռում ՀՀ պետական պարտքի մի մասը կրճատել՝ կլիմայական առաջնահերթությունների իրականացման համար կառավարության կողմից համարժեք միջոցների ներդրման պայմանով:

10) **Աղետների ռիսկերի ֆինանսավորում** – ունի ռազմավարական նշանակություն կլիմայական ռիսկերին դիմակայունության ամրապնդման գործում: Այս մոտեցումն ընդգրկում է տարբեր ֆինանսական գործիքների կիրառություն և համադրություն, այդ թվում՝ զարգացման միջազգային բանկերի պայմանական աղետային ֆինանսավորման գործիքը, ինչպես նաև ապահովագրական լուծումներ՝ փոխհատուցումային, պարամետրիկ և աղետային պարտատոմսերի ձևաչափերով: Բացի այդ, Հայաստանը կարող է առաջիկայում օգտվել ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի Կորուստի և վնասի հիմնադրամից, որը նախատեսում է տրամադրել դրամաշնորհներ և արտոնյալ վարկեր՝ ջրհեղեղներից և այլ աղետներից ռիսկերի կանխարգելման, ինչպես նաև վերականգնման և վերակառուցման աշխատանքների համար:

5. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐ

13. Պայմանական միջոցառումների, ինչպես նաև մի շարք ոչ պայմանական միջոցառումների արդյունավետ իրականացումը պահանջում է ոչ միայն ֆինանսական ռեսուրսների ապահովում, այլև տեխնիկական կարողությունների և ինստիտուցիոնալ պատրաստվածության ամրապնդում: Նման արդյունքը հնարավոր կլինի ապահովել միջազգային ստանդարտների ընդունման, գերատեսչությունների միջև արդյունավետ համակարգման, չափումների, հաշվետվողականության և հավաստագրման համակարգերի ներդրման, ինչպես նաև կլիմայական ֆինանսների ներգրավման և կարողությունների շարունակական զարգացման միջոցով:

14. ԱՍՀ 3.0-ը շեշտադրում է տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ կարիքները՝ միջոցառումների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով: Առաջնահերթություններ են հանդիսանում տվյալների կառավարման համակարգերի և նոր տեխնոլոգիաների ներդրումը՝ պիլոտային ծրագրերի, մասնագիտական վերապատրաստումների և ինստիտուցիոնալ համակարգման միջոցով: Միևնույն ժամանակ կարևոր է ամրապնդել ոլորտային պատասխանատվության մեխանիզմները և կլիմայական գործողությունները ներառել շահագրգիռ նախարարությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական պլանավորման գործընթացներում:

15. Խաչաձև միջոցառումները, ներառյալ քաղաքային և ենթակառուցվածքային դիմակայունությունը, աղետների ռիսկի նվազեցումը և առողջապահական կայունությունը, պահանջում են գերատեսչությունների միջև արդյունավետ համակարգում, ինչպես նաև գործառնական պարտականությունների հստակ բաշխում:

16. Տեխնոլոգիական առաջնահերթությունները ներառում են ՉՀՀ համակարգի ստեղծումը՝ Թափանցիկության ընդլայնված շրջանակին համահունչ: Բացի այդ, անհրաժեշտ է ապահովել կլիմայական տվյալների կառավարման ինստիտուցիոնալացումը և բաց հասանելիության հարթակների ձևավորումը՝ թափանցիկության, վաղ նախազգուշացման և շահագրգիռ կողմերի արդյունավետ ներգրավման նպատակով:

17. Կարողությունների զարգացման կարիքները վերաբերում են կլիմայական նկատառումներով հանրային ֆինանսների կառավարման համակարգերի ամրապնդմանը, ներառյալ կլիմայական բյուջետավորման նշագրումը: Առաջնահերթություն է նաև տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների բարձրացումը՝ հարմարվողականության պլանավորման, ծրագրերի իրականացման և կլիմայական ֆինանսների ներգրավման նպատակով:

18. Բացի այդ, պահանջվում են երկարաժամկետ ուսուցման ծրագրեր և ինստիտուցիոնալ գործընկերություններ ակադեմիական և հետազոտական կառույցների հետ՝ կլիմայական գիտելիքը և լավագույն փորձը ազգային համակարգերում ներդնելու և կայուն կարողությունների ձևավորման համար:

ՄԵՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| Կարգավիճակ | Ոլորտներ | # | Միջոցառում | Ժամանակացույց | Պատասխանատու կառույց | Այլ կառույցներ | Արդյունքի ցուցանիշ/ թիրախ | Վավերացման աղբյուր | Մեկնարկային ցուցանիշ | Ծախսերի գնահատական (<< դրամ, փոխարժեքը՝ 382.61) | Ֆինանսավորման աղբյուր |
|--------------|------------|---|--|---------------|----------------------|---------------------|--|--|---|---|------------------------------|
| Ոչ պայմանակա | Էներգետիկա | 1 | «Վերականգնվող էներգետիկայի և էներգաֆինայրոլոյթան 2022-2030 թվականների ազգային ծրագրի» երկրորդ փուլի (2026-2028 թվականներ) իրագործման ապահովող ծրագիր- ժամանակացույցին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունում | 2026 | ՏԿԵՆ | ՀԾԿՀ | Գործողությունների ծրագրի կազմում և հաստատում: Գործողությունների ծրագիրը ներառում է գենդերային զգայուն էներգիայի մատչելիության և հասանելիության ցուցանիշներ, այդ թվում՝ կանանց, երիտասարդների և խոցելի տնային տնտեսությունների մասնակցությունը խթանող միջոցառումներ էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ծրագրերում Մոնիթորինգի պլանը թարմացվել է՝ սահմանված ցուցանիշների և հասանելիության չափանիշների հիման վրա արդյունքները հետևելու համար: | Իրագործումն ապահովող ծրագրի պաշտոնական հրապարակում և Կառավարության հաստատման որոշման ընդունում << կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 398-Լ որոշում << կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 398-Լ որոշման | << կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 398-Լ որոշում | Լրացուցիչ ռեսուրսներ չի պահանջում | Օրենքով չարգելված աղբյուրներ |
| | | 2 | Կուտակիչ կայանների (հզորությունների) կառուցում | 2026–2035 | ՏԿԵՆ ՀԾԿՀ | Մասնավոր ներդրողներ | Էներգետիկ շուկայի կանոնակարգերի թարմացում՝ ապահովելու կուտակիչ կայանների մասնակցությունը շուկայում: Իրագործելիության ուսումնասիրությունների իրականացում և հաստատում: Միջազգային գործընկերների հետ ֆինանսավորման, կարողությունների և տեխնոլոգիաների փոխանցման հնարավորությունների քննարկում: 2032 թ.-ի դրությամբ Հայաստանում մինչև 150 ՄՎտ կուտակիչ հզորությամբ կայան/կայանների գործարկում: | ՀԾԿՀ | 2024 թվականի դրությամբ 0 ՄՎտ դրվածքային հզորությամբ կուտակում | 47 000 000 000 | Օրենքով չարգելված աղբյուրներ |
| | | 3 | Մեթանի փախուստային արտանետումների | 2026–2031 | «Գազպրոմ Արմենիա» | ՏԿԵՆ ՀԾԿՀ | ՀԾԿՀ 2023թ. փետրվարի 1-ի N:32-Ն որոշման 28-րդ կետի իրականացում. թույլատրելի բնական գազի կորուստների կրճատում մինչև | ՀԾԿՀ և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ | Բնական գազի ընդհանուր կորուստները | 78 668 000 000 | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ |

| Կարգավիճակ | Ոլորտներ | # | Միջոցառում | Ժամանակացույց | Պատասխանատու կառույց | Այլ կառույցներ | Արդյունքի ցուցանիշ/ թիրախ | Վավերացման աղբյուր | Մեկնարկային ցուցանիշ | Ծախսերի գնահատական (<< դրամ, փոխարժեքը՝ 382.61) | Ֆինանսավորման աղբյուր |
|------------|----------|---|--|---------------|--|----------------|--|---|---|---|---|
| | | | Նվազեցում՝ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (<ԾԿՀ) 2023թ. փետրվարի 1-ի N°32-Ն որոշման 28-րդ կետի իրականացման միջոցով | | ՓԲԸ | | ≤ 5.07% (2020–2025), ≤ 3.9% (2025–2030) և ≤ 3.4% (2030թ. հետո): | հաշվետվություններ | 2023թ. կազմել են 5.11% | | |
| | | 4 | Երևանի մետրոպոլիտենի Աջափնյակ վարչական շրջանում նոր կայարանի կառուցում | 2026–2031 | Երևանի քաղաքապետարան («Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ) | ՏԿԵՆ | Մետրոպոլիտենի Աջափնյակ կայարանի և մետրո կամուրջի կառուցում և շահագործման հանձնում: Քաղաքային վերգետնյա տրանսպորտի զերբեռնվածության նվազեցում՝ մինչև 10 % ուղևորահոսքի կրճատում: Կայարանի գործարկումից հետո մետրոպոլիտենի ուղևորահոսքի աճ տարեկան մոտ 30%-ով: | Ստորագրված ավարտական /շահագործման ակտ Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի / տոմսային համակարգի տվյալներ Փորձագիտական գնահատում Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 248-Ա որոշում | Մետրոյի գործող կայարաններ Մոտ 30,0 մլն ուղևորափոխադրումներ (2024 թ.) | 97 823 910 000 | Պետական բյուջե Երևան համայնքի բյուջե Օրենքով չարգելված աղբյուրներ |
| | | 5 | Ընդլայնել վերականգնվող էներգիայի արտադրության մասնաբաժինը և խթանել վերականգնվող | 2026–2030 | Մասնավոր ներդրողներ | ՏԿԵՆ <ԾԿՀ | Թույլտվությունների տրամադրման, հողօգտագործման և էներգահամակարգին միացման խոչընդոտների մոնիթորինգ և հաղթահարում: Լիցենզավորված, ցանցին միացված արևային ֆոտովոլտային կայանների կառուցում՝ | <ԾԿՀ գեկույցներ << կառավարության ն 2021 թվականի | 2024 թվականին՝ 702 ՄՎտ | Լրացուցիչ ռեսուրսներ չի պահանջում | Օրենքով չարգելված աղբյուրներ |

| Կարգավիճակ | Ոլորտներ | # | Միջոցառում | Ժամանակացույց | Պատասխանատու կառույց | Այլ կառույցներ | Արդյունքի ցուցանիշ/ թիրախ | Վավերացման աղբյուր | Մեկնարկային ցուցանիշ | Ծախսերի գնահատական (<< դրամ, փոխարժեքը՝ 382.61) | Ֆինանսավորման աղբյուր |
|------------|----------|---|--|---------------|--|---------------------|--|---|--|---|--|
| | | | Էներգետիկայի լայնածավալ ներդրումները՝ կարևորելով արևային ֆոտովոլտային հզորությունների զարգացումը | | | | <p>հասնելով 1,200 ՄՎտ հզորության:</p> <p>Մինչև 2030 թվականը արևային ֆոտովոլտային զարգացման միջոցով ստեղծված աշխատատեղերի և տեխնիկական վերապատրաստման հնարավորությունների առնվազն 30%-ն հասանելիության ապահովում կանանց և երիտասարդների համար, իսկ 2035 թվականին՝ 40%:</p> | հունվարի 14-ի N 48-Լ որոշում | | | |
| | | 6 | Էներգաարդյունավետության վերանորոգումներ և նոր շենքերի կառուցում՝ նպատակաուղղված նորարարական շինարարական համակարգերի ներդրմանը՝ հանրային, բնակելի և առողջապահական շենքերում Էներգիայի սպառումը նվազեցնելու նպատակով | 2026–2035 | ՏԿԵՆ ՔԿ ՆԳՆ Երևանի քաղաքապետարան Մասնավոր առողջապահական հիմնարկներ | ԿԳՄՍՆ ՏԻՄ-եր | <p>Շինությունների սեյսմիկ և Էներգաարդյունավետության արագ գնահատում FEMA P-154 ընթացակարգերին համապատասխան:</p> <p>RVS միավորների կենտրոնացված տվյալների բազայի մշակում և հաստատում՝ ներառելով հետագա մանրամասն գնահատումների մեխանիզմներ:</p> <p>1,100 հանրային շենքի, 400 բազմաբնակարան շենքի (ուղղված կանանց կողմից գլխավորվող կամ խոցելի տնային տնտեսություններին՝ 30% մինչև 2030 թվականը, 60% մինչև 2035 թվականը) և 50 առողջապահական հաստատության կառուցում կամ վերակառուցում:</p> <p>Սեռով առանձնացված, հասանելի WASH (ջուր, սանիտարիա և հիգիենա) հարմարությունների ապահովում վերանորոգված դպրոցների և կլինիկաների 80%-ում՝ մինչև 2030 թվականը, 100%-ում մինչև 2035 թվականը:</p> <p>Ֆինանսական հաստատությունների, ՏԻՄ-երի և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ՝ բազմաբնակարան շենքերում Էներգիայի սպառման նվազեցման համար համաֆինանսավորման մեխանիզմների մշակում և հաստատում:</p> <p>Տրվել են Էներգետիկ վկայականներ:</p> | <p>Էներգաարդյունավետության բնութագրի վկայականներ</p> <p><< պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը</p> <p><< կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 398-Լ որոշում</p> <p><< վարչապետի 2019 թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշման</p> <p>3 հոկտեմբերի 2024 թվականի N 1581-Ն որոշում</p> | 300 դպրոց 500 մանկապարտեզ 159 բազմաբնակարան շենք | 120 288 800 000 | Պետական բյուջե Համայնքային բյուջե Օրենքով չարգելված աղբյուրներ |

| Կարգավիճակ | Ոլորտներ | # | Միջոցառում | Ժամանակացույց | Պատասխանատու կառույց | Այլ կառույցներ | Արդյունքի ցուցանիշ/ թիրախ | Վավերացման աղբյուր | Մեկնարկային ցուցանիշ | Ծախսերի գնահատական (<< դրամ, փոխարժեքը՝ 382.61) | Ֆինանսավորման աղբյուր |
|------------|----------|---|--|---------------|--|---------------------------------|---|--|--|---|---|
| | | | | | | | Հանրային միջոցներով ֆինանսավորվող բոլոր շինարարական և վերանորոգման նախագծերում նվազագույն էներգաարդյունավետության չափանիշների համապատասխանության ապահովում: | | | | |
| | | 7 | Երևանի քաղաքային տրանսպորտի ցանցի համալրում նոր էլեկտրական ավտոբուսներով | 2026–2030 | Երևանի քաղաքապետարան («Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ) | ՏԿԵՆ | 250 նոր էլեկտրական 18 մետրանոց ավտոբուսի գնում և ներմուծում Լիցքավորման բավարար հզորությամբ էլեկտրատրանսպորտի 2 դեպոնների վերակառուցում և շահագործում: Էլեկտրական ավտոբուսների շահագործման, մարտկոցի անվտանգության և էներգաարդյունավետ վարելու տեխնիկայի վերաբերյալ վարորդների և սպասարկող անձնակազմի վերապատրաստում: | Երևանի քաղաքապետարան << կառավարության ն 2022 թվականի մարտի 24-ի N 398-Լ որոշում Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 248-Ա որոշում | 2024 թվականին՝ 0 էլեկտրական ավտոբուս 2025 թվականին՝ դեպոնների հնամաշ ենթակառուցվածք | 98 711 804 000 | ԱԶԲ, Կանաչ կլիմայական հիմնադրամ Պետական բյուջե Համայնքային բյուջե |
| | | 8 | Էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ներմուծում և շահագործում | 2026–2035 | Մասնավոր գնորդներ | ՊԵԿ Երևանի քաղաքապետարան | Էլեկտրական տրանսպորտային միջոցների ներմուծման, և շահագործման համար մաքսային և կայանելու արտոնությունների երկարաձգում և ընդլայնում՝ խթանելու համար մինչև 2035 թվականը 172,000 էլեկտրական մեքենայի ներմուծումը և շահագործումը: | ՊԵԿ տվյալների բազա << կառավարության ն 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2318-Լ որոշման | 2025 թվականին՝ 11200 էլեկտրական մեքենա | Լրացուցիչ ռեսուրսներ չի պահանջում | |
| | | 9 | Ոռոգման համակարգի բարելավում | 2026–2035 | ԷՆ ՏԿԵՆ ԶՕ-եր | ՇՄՆ | Ինտեգրված ջրային ռեսուրսների կառավարման իրավական շրջանակի վերաբերյալ ուսումնասիրությունների և առաջարկությունների մշակում: Ոռոգման համակարգի կառավարման մեջ հանրային-մասնավոր համագործակցության մոդելների իրագործելիության և | Համաշխարհային բանկի և Ֆրանսիական զարգացման գործակալության (Afd) ծրագրերի իրականացման | Զրի կորուստները կազմում են մոտ 50% մանրածախ և 20% մեծածախ մատակարարման ոլորտում (ըստ ՀԾԿ ցուցանիշների) | 86 394 000 000 | Պետական բյուջե Համայնքային բյուջե, Համաշխարհային բանկ |

| Կարգավիճակ | Ոլորտներ | # | Միջոցառում | Ժամանակացույց | Պատասխանատու կառույց | Այլ կառույցներ | Արդյունքի ցուցանիշ/ թիրախ | Վավերացման աղբյուր | Մեկնարկային ցուցանիշ | Ծախսերի գնահատական (<< դրամ, փոխարժեքը՝ 382.61) | Ֆինանսավորման աղբյուր |
|------------|----------|----|--|---------------|---|---------------------------------|---|---|----------------------|---|--------------------------------------|
| | | | | | | | <p>կիրառելիության ուսումնասիրության մշակում</p> <p>Պետական սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերի տեխնիկական հետազոտության, քարտեզագրման և ֆինանսական գնահատումների իրականացում</p> <p>Ներդրումների առաջնահերթության մեթոդաբանության մշակում</p> <p>50,000 հա հողատարածքի արդիականացված և էներգաարդյունավետ ենթակառուցվածքներով ոռոգում:</p> <p>ՋՕ-երի կարգավորող խորհրդի արդյունավետության և կարողությունների գնահատում և աշխատակիցները վերապատրաստում:</p> <p>ՋՕ ղեկավար պաշտոնների 30%-ի՝ կանանց կողմից զբաղեցման խրախուսում:</p> | <p>մոնիթորինգի հաշվետվություններ</p> <p><ԾԿ<-ի հաշվետվություններ</p> <p>ԷՆ</p> <p><< կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2318-Լ որոշում</p> | | | Ֆրանսիական զարգացման գործակալություն |
| | ԱՊՍՕ | 10 | Ցեմենտի արտադրության ոլորտում սարքավորումների արդիականացում և տեխնոլոգիական գործընթացների կատարելագործում՝ լավագույն հասանելի տեխնոլոգիաների, ինչպես նաև մթնոլորտ արտանետումների հսկողության համար դիտանցման համակարգի ներդրմամբ | 2026-2035 | Մասնավոր ցեմենտի արտադրությամբ զբաղվող ընկերություններ: | <p>ԷՆ</p> <p>ՔԿ</p> <p>ՏԿԵՆ</p> | <p>Աղտոտման բարձր պոտենցիալ ունեցող աղբյուրների համար</p> <ul style="list-style-type: none"> - արտանետումների հսկողության դիտանցման համակարգի ստեղծում - համալիր թույլտվությունների համակարգի ստեղծում և մեխանիզմների մշակում: <p>Ցեմենտի արտադրության կազմակերպություններում սարքավորումների արդիականացում և անցում կայուն գործելակերպերին:</p> <p>Տեխնոլոգիաների փոխանցումը հնարավոր դարձնելու և խթանելու համար շինարարական նորմերի ու ստանդարտների վերանայում:</p> | <p>Ընկերությունների ստուգումներ</p> <p>Իրագործելիության ուսումնասիրությունները հրապարակված և հաստատված են ՔԿ-ի կողմից</p> <p><< կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2318-Լ որոշում</p> | 0 արտադրող | 24 166 100 000 | Օրենքով չարգելված աղբյուրներ |
| | Գյուղա | 11 | Բարձրարժեք | 2026- | ԷՆ | Մասնա | Ծրագրի իրականացում երկու փուլով՝ | Պետական | 2395 բարձրարժեք | 1 364 708 340 | Պետական |

| Կարգավիճակ | Ոլորտներ | # | Միջոցառում | Ժամանակացույց | Պատասխանատու կառույց | Այլ կառույցներ | Արդյունքի ցուցանիշ/ թիրախ | Վավերացման աղբյուր | Մեկնարկային ցուցանիշ | Ծախսերի գնահատական (<< դրամ, փոխարժեքը՝ 382.61) | Ֆինանսավորման աղբյուր |
|------------|--------------|----|--|---------------|----------------------|-------------------------------------|--|---|--|---|---|
| | տնտեսություն | | ցեղերի բարձր մթերատվողականությամբ ցեղատեսակների խոշոր եղջերավոր կենդանիների (հԵԿ) ներմուծում | 2035 | | վոր ֆերմերային տնտեսություններ | <p>- I փուլ (2026–2029)՝ 3940 գլուխ (<< կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշում)</p> <p>- II փուլ (2030–2035)՝ նախատեսվում է որպես շարունակական</p> <p>8,000 բարձրարժեք հԵԿ ցեղատեսակի ներմուծում:</p> <p>Մայրական կազմի անասնազվյալաքանակը մինչև 2030թ. աճ 2.5–3.0%-ով:</p> <p>Ժամանակակից և ինտենսիվ անասնաբուժական գործելակերպերի ներդրում, ֆերմերների վերապատրաստում:</p> <p>Ներմուծված հԵԿ վերաբերյալ թվային ռեգիստրի գործարկում:</p> | <p>աջակցության ծրագրի մոնիթորինգի հաշվետվություններ</p> <p><< կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշում</p> | <p>ցեղատեսակ՝ 2024 թվականի դրությամբ</p> <p>0 արտադրող</p> | <p>I փուլ (2026–2029)</p> <p>II փուլ (2030–2035)</p> <p>Կախված տեխնիկական գնահատումից</p> <p>Մասնավոր ներդրումներ</p> | <p>բյուջե</p> <p>Օրենքով չարգելված աղբյուրներ</p> |
| | | 12 | խելացի անասնագոմերում գոմաղբի կառավարման համակարգի կատարելագործում: | 2026–2035 | ԷՆ | Մասնավոր ֆերմերային տնտեսություններ | <p>100 խելացի անասնագոմերում գոմաղբի կառավարում:</p> <p>Կենդանիների հիվանդացության մակարդակի նվազում 30%-ով:</p> <p>Վերապատրաստման մոդուլներում կանանց աշխատանքային առողջության և անվտանգության նկատառումների ներառում. փորձնական խելացի ֆերմերային տնտեսությունների առնվազն 30%-ի կանանց կամ երիտասարդների կողմից կառավարում:</p> | Պետական աջակցության ծրագրի մոնիթորինգի հաշվետվություններ << կառավարության 2025 թվականի ապրիլի 10-ի N 419 - Լ որոշման | 0 խելացի անասնագոմեր զինված գոմաղբի կառավարման համակարգերով 2024 թվականի դրությամբ | <p>1 163 300 000</p> <p>I փուլ (2025–2028)</p> <p>II փուլ (2029–2035)</p> <p>Կախված տեխնիկական գնահատումից</p> | Պետական բյուջե Օրենքով չարգելված աղբյուրներ |
| | | 13 | Կովերի արհեստական սերմնավորման իրականացում մթերատվության բարձրացման նպատակով | 2026–2035 | ԷՆ | <ԱԱՀ (համաձայնությամբ) | <p>«Գյուղատնտեսական ծառայություններ</p> <p>100,000 կովերի արհեստականորեն սերմնավորում:</p> <p>Սերմնավորված կովերի ռեգիստրի ստեղծում:</p> <p>Թիրախային տարածաշրջաններում սերմնավորված կովերի մասնաբաժնի՝ մինչև 2030թ. անասնազվյալաքանակի 35%-ի իսկ մինչև 2035թ.՝ 50%-ի հասցում:</p> | Պետական աջակցությամբ ծրագրի մոնիթորինգի հաշվետվություններ << կառավարության 2024 թվականի | 0 պետական աջակցությամբ արհեստական սերմնավորված կով 2024 թվականի դրությամբ | <p>294 800 000</p> <p>I փուլ (2025–2026)</p> <p>II փուլ (2027–2035)</p> <p>Կախված տեխնիկական գնահատումից</p> | Պետական բյուջե Օրենքով չարգելված աղբյուրներ |

| Կարգավիճակ | Ոլորտներ | # | Միջոցառում | Ժամանակացույց | Պատասխանատու կառույց | Այլ կառույցներ | Արդյունքի ցուցանիշ/ թիրախ | Վավերացման աղբյուր | Մեկնարկային ցուցանիշ | Ծախսերի գնահատական (<< դրամ, փոխարժեքը՝ 382.61) | Ֆինանսավորման աղբյուր |
|------------|----------|----|--|---------------|----------------------|---------------------------|--|--|--|---|--|
| | | | | | | րի կենտրոն» ՊՈԱԿ | | օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշման | | | |
| | | 14 | Օրգանական պարարտանյութերի օգտագործման ընդլայնում | 2026–2035 | ԷՆ | Մասնավոր արտադրողներ | <p>Մոնիթորինգային հնարավորությունների ավելացում:</p> <p>Գյուղացիական տնտեսությունների և սպառողների իրազեկվածության բարձրացում օրգանական արտադրության և արտադրանքի վերաբերյալ:</p> <p>Ներառական ֆինանսավորման մեխանիզմների ստեղծում, կանանց և երիտասարդների կոոպերատիվների համար դրանց հասանելիության ապահովում:</p> <p><այլակյան օրգանական արտադրանքի ճանաչելիության մեծացում:</p> <p>Ընդհանուր սպառման մեջ օրգանական պարարտանյութերի մասնաբաժնի հասցնում 10%-ի:</p> <p>Առնվազն երկու տեղական օրգանական պարարտանյութեր արտադրող ընկերության աջակցություն:</p> <p>Օրգանական պարարտանյութերի արդյունավետ կիրառման և հողերի կայուն օգտագործման մեթոդների վերաբերյալ վերապատրաստումների կազմակերպում:</p> | Պետական աջակցության ծրագրի մոնիթորինգի հաշվետվություններ | Տվյալը բացակայում է | 527 400 000 I փուլ (2025–2026) 1 000 000 000 II փուլ (2027–2035) | Պետական բյուջե Օրենքով չարգելված աղբյուրներ |
| | | 15 | Խոզանների, գյուղատնտեսական հանդակներում և բուսածածկույթի այրման արգելք | 2026–2035 | ԷՆ | ՇՄՆ ՆԳՆ ՏԻՄ ԲԸՏՄ | <p>Մինչև 2035թ. այրումից առաջացող արտանետումների կրճատում 100%-ով:</p> <p>Բուսական մնացորդների բաց դաշտում այրման ազգային իրավական արգելքի ընդունում:</p> <p>Բուսական մնացորդների այլընտրանքային օգտագործման ծրագրերի մշակում:</p> | ԲԸՏՄ ստուգումների արձանագրություններ Օրենքի պաշտոնական հրապարակում և Կառավարության | CO ₂ 0.131 Gg; CH ₄ 0.003 Gg; N ₂ O 0.121 Gg 2019 թվականի դրությամբ | Լրացուցիչ ռեսուրսներ չի պահանջվում | |

| Կարգավիճակ | Ոլորտներ | # | Միջոցառում | Ժամանակացույց | Պատասխանատու կառույց | Այլ կառույցներ | Արդյունքի ցուցանիշ/ թիրախ | Վավերացման աղբյուր | Մեկնարկային ցուցանիշ | Ծախսերի գնահատական (<< դրամ, փոխարժեքը՝ 382.61) | Ֆինանսավորման աղբյուր |
|------------|----------|----|--|---------------|------------------------------|---|--|--|-----------------------------------|---|--|
| | Թափոններ | 16 | «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» օրենքի ընդունում | 2026-2027 | ՇՄՆ ՏԿԵՆ ՖՆ ՊԵԿ | ԷՆ ՀԱՀ (համաձայնությամբ) | «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» օրենքի ընդունում: Արտադրողի ընդլայնված պատասխանատվության շրջանակներում կառավարվող ԱԸՊ ապրանքների ցանկի սահմանում: Հատուկ թափոնների վերամշակման ազգային թիրախների հաստատում: | հաստատման որոշման ընդունում: << օրենքը «Մթնոլորտային օդի պահպանության մասին» | | | |
| | | 17 | <<ում թափոնների կառավարման համակարգի ներդրում և սանիտարական աղբավայրերի կառուցում: | 2026–2035 | ՏԿԵՆ | ՇՄՆ ՏԻՄ-եր Մարզպետների աշխատակազմեր | 8 մարզերում կոշտ կենցաղային թափոնների ինտեգրված կառավարման համակարգի մշակում: 4 սանիտարական աղբավայրի կառուցում: | Օրենքի պաշտոնական հրապարակում և օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունում: << վարչապետի 2019 թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշման | Օրենքի նախագիծը մշակման փուլում է | Լրացուցիչ ռեսուրսներ չի պահանջվում | |
| | | 18 | Հրազդանի սանիտարական աղբավայրի կառուցման և շահագործման | 2026 | ՏԿԵՆ | | Հրազդան քաղաքի մոտ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի թափոնների ընդունման համար գազի հավաքման համակարգով ԵՄ չափանիշներին համապատասխան սանիտարական | Ստորագրված շինարարության ավարտական ակտեր << կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 143-Լ որոշման | Մարզերում չկառավարվող աղբավայրեր | 34 641 000 000 Նախնական | Պետական բյուջե Օրենքով չարգելված աղբյուրներ |

| Կարգավիճակ | Ոլորտներ | # | Միջոցառում | Ժամանակացույց | Պատասխանատու կառույց | Այլ կառույցներ | Արդյունքի ցուցանիշ/ թիրախ | Վավերացման աղբյուր | Մեկնարկային ցուցանիշ | Ծախսերի գնահատական (<< դրամ, փոխարժեքը՝ 382.61) | Ֆինանսավորման աղբյուր |
|------------|-------------------------------------|-----------|--|--------------------|---|----------------|--|--|--|---|---|
| | | | իրականացում | | | | աղբավայրի կառուցում և շահագործում: | << կառավարության ն 2025 թվականի փետրվարի 13-ի N 143-Լ որոշման | | | Օրենքով չարգելված աղբյուրներ |
| | | 19 | Երևանում գործող աղբավայրերի փակում և նոր սանիտարական աղբավայրի կառուցում | 2026-2029 | Երևանի քաղաքապետարան («Երևանի կառուցապատման ներդրում ային ԾԻԳ» ՀՈԱԿ) | ՏԿԵՆ | ԵՄ պահանջներին համապատասխան սանիտարական աղբավայրի կառուցում և շահագործում՝ մեթանի հավաքման և պաշտպանիչ շերտերի համակարգերով: | Ստորագրված ավարտական / շահագործման ակտեր Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 248-Ա որոշում | Նուբարաշենի և Աջափնյակի ոչ սանիտարական աղբավայրերը շարունակում են գործել | 12 000 000 000 (նախնական) | ՎՋԵԲ, ԱՋԲ, ՀԲ Պետական բյուջե Երևանի քաղաքապետարան |
| | | 20 | Անտառավերական գնման և անտառապատման աշխատանքների իրականացում | 2026-2035 | ՇՄՆ | ՏԻՄ-եր | Մինչև 2035թ. 25,000 հա տարածքի կայուն անտառավերական գնման և անտառապատման աշխատանքների իրականացում: Պեզրադացված հողերի ազգային ցուցակագրման ու քարտեզագրման ավարտում: Անտառավերական գնման և անտառապատման փուլային թիրախներով ծրագրի մշակում և ՀԿ-ների հետ երկխոսության և ջանքերի մեկտեղման հարթակի ստեղծում: Առնվազն 4 տարի հետագա խնամքի և մոնիթորինգային աշխատանքների իրականացում: | ՇՄՆ << կենսաբանական և բազմազանության պահպանության ն 2026-2030 թվականների ազգային նպատակների և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության ն որոշում | 2024 թվականի դրությամբ անտառածածկ տարածքները կազմում են 333.84 հազար հեկտար: | 122 150 000 000 | Պետական բյուջե Օրենքով չարգելված աղբյուրներ |
| 21 | Գյուղատնտեսական նշանակության հողերի | 2028-2035 | ԷՆ ՇՄՆ | ՏԿԵՆ «Մեխոր իացիա» | 4000 հա դեզրադացված գյուղատնտեսական նշանակության հողերի վերականգնում: | ՇՄՆ << | Տվյալները բացակայում են | 1 481 500 000 | Պետական բյուջե | | |

| Կարգավիճակ | Ոլորտներ | # | Միջոցառում | Ժամանակացույց | Պատասխանատու կառույց | Այլ կառույցներ | Արդյունքի ցուցանիշ/ թիրախ | Վավերացման աղբյուր | Մեկնարկային ցուցանիշ | Ծախսերի գնահատական (<< դրամ, փոխարժեքը՝ 382.61) | Ֆինանսավորման աղբյուր |
|------------|----------|----|---|---------------|----------------------|----------------|--|--|--|---|--|
| | | | դեգրադացիայի դեմ պայքար | | | ՓԲԸ» | 350 ֆերմերների վերապատրաստում: | Կենսաբանական բազմազանության պահպանության 2026-2030 թվականների ազգային նպատակների և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշում << Կառավարության 2021 թվականի մայիսի 6-ի N 725-Լ որոշում | | | Օրենքով չարգելված աղբյուրներ |
| | | 22 | Դեգրադացված անտառային տարածքների առնվազն 20%-ի կայուն կառավարում և վերականգնում | 2026-2035 | ՇՄՆ | ՏԻՄ-եր | 67,600 հա անտառային տարածքների վերականգնում և կայուն կառավարում: | ՇՄՆ << Կենսաբանական բազմազանության պահպանության 2026-2030 թվականների ազգային նպատակների և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության | Կայուն գործելակերպերի իրականացում՝ 0 հա անտառային տարածքներում | 14 872 000 000 | Պետական բյուջե Օրենքով չարգելված աղբյուրներ |

| Կարգավիճակ | Ոլորտներ | # | Միջոցառում | Ժամանակացույց | Պատասխանատու կառույց | Այլ կառույցներ | Արդյունքի ցուցանիշ/ թիրախ | Վավերացման աղբյուր | Մեկնարկային ցուցանիշ | Ծախսերի գնահատական (<< դրամ, փոխարժեքը՝ 382.61) | Ֆինանսավորման աղբյուր |
|------------|------------|----|--|---------------|----------------------|----------------------------|---|---|---|---|---|
| | | | | | | | | ն որոշում | | | |
| Պայմանական | Էներգետիկա | 23 | Տարածաշրջանային էներգետիկ շուկաների հետ կապակցվածության հնարավորությունների ուսումնասիրություն. էներգետիկ կապակցվածության գործողությունների ծրագրի մշակում | 2026–2028 | ՏԿԵՆ | ՀԷՑ ԲԷՑ ՀԾԿԿ | Էներգետիկ կապակցվածության գործողությունների ծրագրի մշակում և ինտեգրում ոլորտային պլանավորման մեջ: | Ծրագրի պաշտոնական հրապարակում և Կառավարության և հաստատման որոշման ընդունում | Վրաստանի և Իրանի հետ սահմանափակ համագործակցություն | 70 000 000 | Իրականացվում է միայն միջազգային աջակցության դեպքում (ֆինանսական, տեխնիկական, կարողություններ) |
| | | 24 | Արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում՝ բավարար պահեստավորման հզորությամբ | 2026–2035 | Մասնավոր ներդրողներ | ՏԿԵՆ ՀԷՑ ԲԷՑ ՀԾԿԿ | 2035 թ.-ին ընդհանուր 1,375 ՄՎտ վերականգնվող (արևային) դրվածքային հզորության ապահովում: | ՀԾԿԿ | 2024 թվականին՝ 702 ՄՎտ | Լրացուցիչ ռեսուրսներ չի պահանջվում | |
